№ 80 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 14 **1894** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 14 № 80

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուսանելի դասեր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութիւնը. Սովեալների օգտին. Նամակ Բաղուից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խալէբան Թիւրքիայում. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ժուրնալիստների առաջին միջազգային ժողովը.

ՈՒՍԱՆԵԼԻ ԴԱՍԵՐ

Ընթացիկ կեանքը մի մեծ հարցաքննութիւն է հասարակական գործողի համար: Այստեղ նա ստիպված է գործնական դիրք բռնելու այս և այն կենսական երևոյթների վերաբերութեամբ, այստեղ նա պարտաւոր է որոշ յարաբերութիւնների մէջ մտնելու մարդկանց հետ, ընդհանուր զաղափարների շրջանից գործնական առաջադիմութիւնների աշխարհն անցնել, այստեղ նա հրաւիրված է իր քաղաքացիական արիութիւնը, իր հոգու ազնուութիւնը, իր պատուաձանաչութիւնը հանդէս բերել և բոլոր խոչընդոտների փորձին ենթարկելով նրանց, ցոյց տալ, թէ որչափ բարոյական ոյժ և կորով ունի նա կեանքի մէջ գործելու համար:

Այդպիսի մեծ փորձերից մէկն էր և այն պատգամաւորական ընտրութիւնը, որ ըղբաղեցրել էր Թիֆլիսի հայ հասարակութիւնը մի ամբողջ ամսվայ ընթացքում:

Այդ ընտրութիւնների ժամանակ պարզ երևաց, որ նախագահող քահանաներից մի քանիսը բոլորովին տեղեկութիւն չունեն, թէ ինչ է ընտրութիւնը, ինչ է կանոնը, հրահանգը: Նրանք ձգտում էին ոչ այն բանին, որ նպաստեն ընտրողների կարծիքները հարազատ կերպով արտայայտելուն, ոչ այն բանին, որ ժողովրդի մեծամասնութեան կամքը իմացվի, այլ որ իրանց ցանկացած, իրանց հաճելի հետևանքներին հասնեն:

Մինչդեռ ընտրութիւններին հսկողը, ընտրութիւնների ղեկավարողը պէտք է ինքը չը միջամտի իր անձնական հակումներով, այլ միայն հետևի կանոնաւորութիւն և կարգ պահպանելուն: Նրա գործը չէ, թէ ով ընտրվեց, նրան հակակրելի, թէ համակրելի անձն. ով և ընտրված լինի, նա պէտք է նրա ընտրութիւնը արձանագրի ամենայն հարազատութեամբ:

Ահա մի ընտրողական ժողով նշանակել է թեկնածուներ և սկսում է ընտրութեան գործողութիւնը: Նախագահողը յայտնում է, թէ թեկնածուներից մէկին պէտք է ջնջել, որովհետև նա ուրիշ եկեղեցու ծխական է: Ժողովականները պատասխանում են, որ եղած կանոնները թոյլ են տալիս այդ տեսակ ընտրութիւն, և նախագահողը վկայում է, որ իրաւ է, կայ այդպիսի թոյլտուութիւն. բայց և այնպէս ոչ թէ միայն պնդում է իր առաջվայ ասածի վրա, այլ և ցանկանում է նոյն իսկ նիստը փակել:

Եթէ այդտեղ ժողովուրդը վիճէ, բողոքէ, աղաղակէ, ո՞վ է մեղաւոր:

Ահա ձեզ մի ուրիշ ժողով, ուր ժողովականները հարց են տալիս նախագահողին, թէ ի՞նչպէս պէտք է կատարեն ընտրութիւնը՝ արդեօք թերթիկներով, թէ քուէտուփերով, որպէս զի ընտրողները որոշ գիրք բռնեն դէպի ընտրողական գործողութիւնը: Նախագահող քահանան չէ կամենում պատասխանել և փակում է նիստը:

Այս և սրանց նման դէպքերը առիթ են դառնում վէճերի, բողոքների, որոնք տեղի չէին ունենայ, եթէ նախագահողները կանոնների հարազատ կատարողները լինէին:

Մեր վերջին ընտրութիւնների ժամանակ ժողովուրդը այնքան լաւ, այնքան օրինաւոր էր պահում իրան, այնքան գիտակցաբար էր վերաբերվում դէպի իր իրաւունքները և պարտաւորութիւնները, որ ոչ մի առիթ չը կար դիմելու ոստիկանութեան, մինչդեռ թէ նախագահողներից մի երկուսը և թէ ինքնակոչ մասնաւոր մի քանի անձինք դիմել էին ոստիկանութեան, խընդրելով նրա օգնութիւնը: Այդպիսի մի օգնութեան կարիք չը կար և չէր էլ կարող լինել. միայն վերին աստիճանի թեթևամտութիւնը կարող էր դրդել արտակարգ միջոցների ձեռնարկել և զուր տեղը յուզմունք առաջ բերել:

Վերջին ընտրութիւնների ժամանակ տեղի ունեցած իրողութիւնները պէտք է բարձր հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը գրաւեն և միջոցներ ձեռք առնվեն, որ միւս անգամ չը կրկնվեն այն բոլոր անկանոնութիւնները, որ տեղի ունեցան այն անձանց կողմից, որոնց յանձնված էր ընտրութիւնների կանոնաւորութեան վրա հսկելը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Յուլիսի 12-ին Ներսիսեան դպրոցի դահլիճի մէջ տեղի ունեցաւ հոգաբարձական ընտրութիւն:

Երեկոյեան ժամը 7-ից պատգամաւորները ըսկսվեցին հաւաքվել: Մօտ 8 ժամին թեմական առաջնորդ Սուրէնեան եպիսկոպոսը բացեց նիստը աղօթքով:

Դիմելով պատգամաւորներին՝ եպիսկոպոսը ասեց. «Յարգելի պատգամաւորներ. Դուք այսօր հրաւիրված էք, իբրև Թիֆլիսի եկեղեցիների ներկայացուցիչներ, ընտրելու Ներսիսեան դպրոցի համար հոգաբարձուներ: Ներսէս Աշտարակեցին հիմնել է այդ դպրոցը, որ այստեղ պատրաստվեն արժանաւոր սպասաւորներ հայոց եկեղեցիների համար: Այդ պատճառով այս դպրոցը պէտք է ունենայ կրօնական ուղղութիւն, և ոչ ոք այդ ուղղութիւնը փոխելու իրաւունք չունի: Այս դպրոցը ապահովված է և ունի շարժական ու անշարժ շատ կալուածքներ. ուստի պէտք է լինեն այնպիսի հոգաբարձուներ, որոնց կարելի լինի վստահութեամբ յանձնել դպրոցի հարստութիւնը: Բացի դրանից, հարկաւոր է, որ հոգաբարձութիւնը հեռու լինի կուսակցական նեղ միտումներից և գործի յօգուտ դպրոցի շահերի: Այս բոլորը ասելուց յետոյ՝ համապատասխան մարդկանց ընտրելը թողնում եմ ձեր խոհեմութեանը»:

Այդ խօսքերից յետոյ նախագահը կարդաց Ներսիսեան դպրոցի կանոնադրութեան այն կէտը, որը վերաբերում է ընտրութեան. ապա մէկ-մէկ կարդալով պատգամաւորների անունները, բաժանեց թերթիկներ, առաջարկելով գրել 12 հոգաբարձուների և 4 կանդիդատների անուններ:—Մի խումբ պատգամաւորներ (խաւարամիտ կուսակցութեան պատկանող), որոնք մինչև այդ ժամանակ դահլիճ չէին մտնում, կարծելով, որ իրանց դէմ տեղի ունեցաւ հոգաբարձական ընտրութիւն:

Գրեթէ ամենքս գրեցինք հետևեալ անունները՝ Գրիգոր Արծրունի, Գրիգոր Տէր-Գրիգորեան, Գրիգոր Ղազարեան, Գրիգոր Ալիխանեան, Գրիգոր Ալիխանեան, Գրիգոր Ալիխան

բացակայութեամբ կարող են խանդարել ժողովի բացման, տեսնելով, որ նիստը բացվեց, ներս մըտան, և մասնակցեցին ընտրութեան։

Մասնակցող պատգամաւորների թիւը 61 էր. բացակայ էին ութ հոգի, որոնք քաղաքում չեն։

Թերթիկներով առաջարկեցին մօտ 28 հոգի, իբրև հոգաբարձուներ, և մօտ տասն հոգի, իբրև կանդիդատներ։

Ոմանք հրաժարվեցին քուէարկվելուց, ոմանք էլ չը քուէարկվեցին, որովհետև բացակայ էին, և ոչ ոք չը երաշխաւորեց, որ նրանք համաձայն են քուէարկվելու։ Քուէարկվեցին իբրև հոգաբարձուներ 20 հոգի, իսկ իբրև կանդիդատներ՝ 6 հոգի։

Առաջադիմական կուսակցութիւնը նախօրօք կազմել էր իր թեկնածուների ցուցակը, և 12 հոգաբարձուների ամբողջ ցուցակը, կանդիդատների հետ միասին, անցաւ ձայների ահագին առաւելութեամբ։

Առաջ ենք բերում առաջադիմական կուսակցութեան թեկնածուների ցուցակը, ստացած ձայների թիւով։

Յովհաննէս Ալիխանեան 49 սպիտակ, 12 սև
Միքայէլ Թամամշեան—48 սպիտակ, 11 սև
Յովհաննէս Սպենդիարեան 46 սպիտակ, 15 սև
Պօղոս Մելիք-Ղարագեօզեան 44 սպ., 16 սև
Կարապետ Քոչարեան 44 սպիտակ, 16 սև
Սամսոն Յարութիւնեան 44 սպիտակ, 17 սև
Սամուէլ Բալաղեան—43 սպիտակ, 17 սև
Յակոբ Թադէոսեան 43 սպիտակ, 17 սև
Ալէքսանդր Մելիք-Ազարեան 42 սպիտակ, 18 սև
Իսահակ Բուղդանեան 42 սպիտակ, 18 սև
Ալէքսանդր Քալանթար 41 սպիտակ, 19 սև
Բժ. Յովհաննէս Լօրիս-Մելիքեան 41 սպ., 19 սև

Դրանք բոլորն էլ ընտրվեցին հոգաբարձուներ։

Իբրև կանդիդատներ քուէարկվեցին 6 հոգի։ Ահա.

Բժ. Եփրեմ Աղամալեան 44 սպիտակ, 16 սև
Լեոն Եղիազարեան 40 սպիտակ, 22 սև
Նաղարէթ Տիգրանեան 39 սպիտակ, 21 սև
Յովսէփ Ամիրխանեան 34 սպիտակ, 27 սև։

Դրանք ձայների առաւելութիւն ստանալով, ընտրվեցին հոգաբարձական կանդիդատներ, իսկ երկու միւս քուէարկվողները՝ Ա. Վարդապետեան և Ա. Բարխուդարեան քիչ ձայն ստանալով, ընտրված չը համարվեցին։

Առաջ ենք բերում հակառակ կուսակցութեան հոգաբարձական թեկնածուների ցուցակը, ստացած ձայներով։

Գրիգոր Բայանդուրեան 23 սպիտակ, 38 սև
Մկրտիչ Կարապետեան 23 սպիտակ, 39 սև
Բժ. Կարապետ Ստեփանեան 30 սպիտակ, 29 սև
Գրիգոր Փրիդոնեան 26 սպիտակ, 35 սև
Յովհաննէս Ծովհաննեան 23 սպիտակ, 38 սև
Բժ. Տէր-Գրիգորեան զղլարցի, 25 սպ., 36 սև
Պետրոս Քալանթարեան 19 սպիտակ, 41 սև
Կարլ Մելիք-Ադամեան 19 սպիտակ, 41 սև։

Այդպիսով հակառակ կուսակցութեան բոլոր թեկնածուները սևացան, միայն բժ. Կ. Ստեփանեան անցաւ մի ձայնով։

Երբ ընտրութեան հետևանքը յայտնի եղաւ, անմիջապէս կազմվեց արձանագրութիւն, որին ստորագրեցին դահլիճում մնացած բոլոր պատգամաւորները։

Նիստը, որ փակվեց ժամը $12^1/_2$-ին, անցաւ վերին աստիճանի խաղաղ և կանոնաւոր կերպով։

Արձանագրելով այդ բոլորը, մենք մեր պարտքն ենք համարում կրկին անգամ շնորհաւորել թէ Թիֆլիսի ընտրող ժողովրդին և թէ պատգամաւորներին այդ ընտրութեան աջող հետևանքի համար։

Չենք կարող չը յիշատակել, որ ժողովրդի մեծ բազմութիւն, հաւաքված Ներսիսեան դպրոցի առաջ, անհամբեր սպասում էր ընտրութեան հետևանքներին։

ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Թիւրքաց Հայաստանի, Երևանի ու Կարսի նահանգների սովեալների օգտին.

1) Բ ե լ գ ր ա դ ի ց (Սերբիա) տիկին Մարիամ Սմիրնովայից 30 ռուբլի։

2) Ե ր և ա ն ի ց, Ուսուցիչ Հայրապետ Բուռնազեանի միջոցով 5 ռուբլի, որ հանգանակել է Ցըղնա գիւղում, ուսուցիչների և աշակերտների մէջ։

3) Ղ ր ի մ ի ց, Մի ոմն 5 ռուբլի։

Ուրեմն նախկին 348 ռուբլի 53 կոպէկի հետ այժմ ունենք ընդամենը 388 ռուբլի 53 կոպէկ։

Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 7034 ռուբլի 35 կ.։

Ուղարկել ենք 6646 ռ.։

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Յուլիսի 11-ին

Ընթերցողներին արդէն յայտնի է, որ Բագուի դրամատէր Գրիգոր Թումայեանը իր ամուսնու, երկու աղջկայ և մի տղայի հետ արտասահման ուղևորվելիս՝ զոհ գնացին Սև ծովի ալիքներին, «Վլադիմիր» շոգենաւի խորտակման ժամանակ։

Այդ ընտանիքի անդամներից ազատվել են միայն 17 տարեկան աղջիկը և փոքրիկ տղան. հայրը, մայրը և մի աղջիկը, գիմնազիայի աշակերտուհի, խեղդվել են։

Խեղդվածներից առ այժմ հօր դիակն են գտել, որ և բերել են այստեղ թաղելու։ Մի քանի օր պահելուց յետոյ երէկ, կիրակի, տեղի ունեցաւ թաղումը։ Յուղարկաւորութեան հանդիսին աւելի շուք տալու համար յատուկ հրաւէրքով ուղարկված էր Էջմիածնից Սարգիս եպիսկոպոս Տէր-Գասպարեանը, որը և այդ օրվայ պատարագիչն էր։ Հանգուցեալի որդիներին ցաւակցութիւն էր յայտնել նաև վեհափառը առանձին կոնդակով։ Յուղարկաւորութեանը ներկայ էին քաղաքագլուխը և քաղաքային վարչութեան անդամներից շատերը։ Չը նայելով, որ հասարակութիւնից շատերը արդէն ամարանոցներում են, այնու ամենայնիւ, մի ահագին բազմութիւն պարտք էր համարել ներկայ գտնվել յուղարկաւորութեան հանդիսին։

Ազգականներից, բարեկամներից և երախտագէտներից դրված պսակների թիւը քսանից անցնում էր. աչքի էին ընկնում «Մարդասիրական ընկերութեան» խորհրդի և քաղաքային վարչութեան կողմից դրված պսակները։

Հանգուցեալ Թումայեանը յայտնի կոմերսանտ էր. ժամանակակից վաճառականի բացասական կողմերը ունենալով հանդերձ, ունէր և դրական, գովելի կողմեր. նա վերին աստիճանի ինքնուրոյն, ժիր և չիտակ վաճառական էր։ Տեղիս վաճառականների շրջանում հանգուցեալը մեծ յարգանք էր վայելում։ Այս տարի հանգուցեալը «Մարդասիրական ընկերութեան» խորհրդի նախագահ ընտրվեց։ Բացի «Մարդասիրական ընկերութեան» անդամ և նախագահ լինելուց, հանգուցեալը երկար ժամանակ վարել է նաև տեղական ծխական դպրոցների հոգաբարձուի պաշտօն։

Թումայեանը մեծ կարողութիւն է թողել ժառանգներին. ունի վեց շոգենաւ, հինգ տուն, նաւթահանք և այլն. թէ շարժական և թէ անշարժ կայքերի գումարը հաշուում են մօտաւորապէս երեք միլիոնի։

1892 թ-ից ունի կազմած կտակ, որի զօրութեամբ 75,000 ռ. յատկացված է բարեգործական նպատակներին, հետևեալ կերպով։

Մարդասիրական ընկերութեան 20,000 ռ.,—նոյն ընկերութեան 10,000 ռ. ի պահեստ, այն պայմանով, որ դրա տոկոսով նպաստեն 5 աղքատ գիւղական դպրոցներին, ընտրութեամբ ընկերութեան խորհրդի և հանգուցեալի որդոց։ 5,000 ռ. յօգուտ Բագուի Հայուհեաց ընկերութեան, դարձեալ «Մարդասիրական ընկերութեան» մօտ պահելու համար. այդ գումարով ընկերութիւնը պէտք է գնէ տոկոսաբեր թղթեր և իւրաքանչիւր տարի տոկոսը պէտք է աւելացնէ Հայուհեաց ընկերութեան դրամագլխին, մինչև վերջինիս հաստատվելը, իսկ յետոյ ամբողջ գումարը պէտք է յանձնեն ընկերութեան։ Էջմիածնի տաճարի վերանորոգութեան համար 10,000 ռ.։ Բագուի օրիորդաց ուսումնարանին 5000 ռ։ Գէորգեան ճեմարանին, Ներսիսեան դպրոցին և Շուշու թեմական դպրոցին 5000-ական ռուբլի։

Մեր քաղաքում կառուցանելի եկեղեցու համար 10,000 ռ., որը առ այժմ, մինչև շինութեան սկսելը, պէտք է շահեցնել պետական բանկում։

Թէև այս կտակը արդէն յայտարարված է, բայց քաղաքում լուր է պտտում, որ իբր թէ կայ և լրացուցիչ կտակ, որը դեռ յայտնի չէ, թէ որտեղ է գտնվում...

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, յուլիսի 7-ին

Կարծելով թէ փոքր ի շատէ աղնիւ մարդու հետ գործ պէտք է ունենամ, ես թոյլ տուի ինձ «Մշակի» 74 №-ում, «Արձագանքի» թղթակից «բագուեցուն» ընկերական դատի հրաւիրել՝ իր յանդուգն զրպարտութեան համար, սակայն, ինչպէս երևում է, չարաչար սխալված եմ, որովհետև այդ «բագուեցին» ոչ միայն ազնիւ չէ, այլ մի գարշելի խեղկատակ է. նա այդ ապացուցանում է իր «նշանաւոր» պատասխանով («Արձագանք» № 75) և տեսէք, թէ ինչպէս։

Ես նրանից պահանջում եմ դիմակը վերցնել,—նա ասում է թէ տողերիս գրողը Բագուում բաւական «յայտնի» է. ես հարցնում եմ անուն ազգանունը,—նա ասում է, թէ տողերիս գրողը Գանձակում աշակերտուհիներին կատու է մորթել տուել. ես նրան ընկերական դատի եմ հրաւիրում,—նա ասում է, թէ տողերիս գրողը արտաքսվեց Գանձակի դպրոցից. և, վերջապէս, ես նրան զրպարտիչ եմ անուանում, նա դժբաղդութիւն է համարում, որ ինձ հետ գործ ունի, և ով... մի թշուառ արարած, որ վստահութիւն չունի անունը յայտնելու, մի թուլամորթ անձնաւորութիւն, որ ընդունակութիւն չունի հարցիս ուղղակի պատասխանելու։ Սա խեղկատակութիւն չէ՞, ապա ինչ է։

«Արձագանքը» իմ նամակը չէ տպում. բագուեցին՝ այդ թերթի թղթակիցը, խմբագրութիւնից նամակիս բովանդակութիւնը իմանում, հրաւէրս լսում և լռում է... Եւ երբ ամբողջ 16 օր սպասելուց յետոյ՝ հարկադրված՝ «Մշակին» ուղղումեմ նոյն բովանդակութեամբ մի երկրորդ նամակ, այն ժամանակ «Արձագանքի» խմբագրութիւնը, փոխանակ ստիպելու թղթակցին, որ ուղղակի հարցիս պատասխանի, թոյլ է տալիս դարձեալ քողարկված մնալու և անտեղի քարեր շպրտելու։ Այդ վարմունքը «Արձագանքի» խմբագրութեան կողմից առնուազն անամօթութիւն է, իսկ նրա թղթակցի կողմից՝ ստորութիւն։

«Բագուեցին» անունը չէ յայտնում և ընկերական դատ չէ ընդունում. անուղղակի կերպով ցանկութիւն է յայտնում դատվելու «միայն և միայն» դատարանում.—և դիտէք ինչու համար. Նրա համար, որովհետև ընկերական դատի հետևանքը շատ շուտով կը յայտնվէր, իսկ պետական դատինը տարիներ կարելի է ձգձգել։ Մինչև որ ինձ կաջողվի օրինական ճանապարհով «Արձագանքի» խմբագրութիւնից իմանալ թղթակցի անունը, մինչև որ դատարանում գործը կը նշանակվի, մինչև որ հերթը կը գայ քննութեան, մինչև որ կաջողվի բոլոր վկաներին ժողովել,—այն ժամանակ հարցն էլ մոռացութեան տրված կը լինի, և ով գիտէ «բագուեցին» էլ պաշտօնով ուր տեղափոխված կը լինի...

Ահա թէ ինչ նպատակով է խմբագրութեան փեշի տակ թաքնվում և պետական դատարան ցանկանում։ Այդ վարմունքը, որ անհամեմատ պախարակելի է, քան դատից ուղղակի փախչելը, իրաւունք է տալիս մեզ դրոշմելու «անյայտ» բագուեցու ճակատին ստոր անունը, ձեռք վերցնել և երես դարձնել նրանից։

Ն. Դաւթեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիւրքաց Հայաստանի այս տարվայ հունձի մասին մեզ հետևեալ տեղեկութիւններ են հաղորդում։ Մուշ և Բուլանըղ հունձը լաւ չէ, անձրև չը գալու պատճառով։ Առատ է միայն կորեկի հունձը, որը և կը ծառայի ժողովրդին իբրև ուտելու զլխաւոր մթերք։ Հունձը լաւ է Կարինի և Բասենի կողմերում, իսկ Դիարբեքիր, Վան և Սղերդ հունձը վերին աստիճանի առատ է։ Ընդհանրապէս ասելով, երկրի մի քանի մասերում հունձը այնքան լաւ է, որ կարող է բաւականացնել միւս մասերին, որտեղ հունձը վատ է։ Դժբաղդութիւնը միայն այն է, որ ժողովուրդը առհասարակ տնտեսապէս այնքան ուժասպառ է եղել, որ հունձի փոքրիկ անաջողութեանն էլ չէ դիմանում։

—

Բարեգործական ընկերութեան Կարսի ճիւղի տեղական վարչութիւնը ուղարկել է հետևեալ նամակը. «Յօգուտ գաղթականների, յունիսի 23-ից «Մշակի» խմբագրութիւնից ուղարկած 100 ռուբլին վարչութիւնս ստացաւ, որի համար պարտք է համարում յայտնել իր խորին շնորհակալութիւնը յարգելի խմբագրութեանդ և նուիրատուներին»։

—

Բժշկապետ Ց. Գասպարեանցի նուիրած 10 օրինակ «Մշակը» մենք որոշեցինք ուղարկել Երևանի և Շուշու թեմերի հետևեալ դպրոցներին. 1) Նախիջևանի գաւառի Աստապատ գիւղի դպրոցին. 2) Խանլըխլար գիւղի հայոց դպրոցին. 3) Զանգեզուր գաւառի Շերվանիձոր գիւղի դպրոցին. 4) Դավալու գիւղի հայոց դպրոցին. 5) Ներքին Ադուլիսի հայոց դպրոցին. 6) Հաղրութի հայոց դպրոցին. 7) Նուխու օրիորդաց դպրոցին. 8) Կուսապատի հայոց դպրոցին։ Բացի դրանից էլի երկու օրինակ մնում է Շուշու թեմի համար։ Առաջարկում ենք այդ թեմի գիւղական դպրոցների վարչութիւններին, յայտնել մեզ հասցէները, որպէս զի մենք ուղարկենք «Մշակի» մնացած երկու օրինակը էլ։

—

Կիէվի համալսարանի պրիվատ-դոցէնտ Գրէն ներկայումս Մցխէթում հնագիտական հետախուզութիւններ է անում ուրիշ հնագէտների հետ միասին։ Շուտով նա դիտաւորութիւն ունի կարդալ երկու դասախօսութիւն՝ 1) Արևելքի սիրոյ երգերի և Աֆրոդիտայի հին կուլտուրայի մասին և 2) Հայերի ապստամբութեան մասին։

—

Տիկին Սրբուհի Կոստանեան շարունակում է գովելի եռանդով գրքոյկներ թարգմանել ժողովրդական ընթերցանութեան համար։ Այս օրերս ստացանք նրա թարգմանած հետևեալ նոր գրքոյկները.—«Որսի գնտակ», «Անհնգիտ գիշեր» «Մայրական սէր», «Գէորգ Կարբը», որոնք բոլորն էլ թարգմանված են Օստրոգորսկուց, և Հոֆմանի «Մրցումն»։ Գրքոյկների գինը նշանակված է իւրաքանչիւրը 5 կոպէկ։

—

Յուլիսի 10-ին, Թիֆլիսի Էջմիածնեցոց եկեղեցում երէցփոխի ընտրութիւն էր նշանակված։ Ձայների առաւելութեամբ երէցփոխ ընտրվեց Յովհաննէս Նիկողոսեան։

—

Ինչպէս յայտնի է, Ռուսաստանի գիւղերում հիմնված են չ ե մ ա ր ա ն ն ե ր հաց ամբարելու համար, որպէս զի անբերրիութեան դէպքերում, կամ սերմացու չեղած միջոցին՝ գիւղացիները կարողութիւն ունենան այդ չեմարաններից հացահատիկներ վերցնել իրանց գործածութեան համար։ Երկաթուղիների տարածվելը, հացի առևտրի մեծանալը, հացի պահպանելու դժուարութիւնը փոքրիկ չեմարաններում՝ թելադրեցին գիւղացիներին թողնել հաց ամբարելը և նրա փոխարէն փող պահել, որի պահպանելը շատ հեշտ է, և որը հացի վերածելը՝ շնորհիւ դիւրացած ճանապարհների, նոյնպէս դժուար չէ, մանաւանդ որ փողը մի և նոյն ժամանակ բերում է տոկոսներ։ Բայց անցեալ տարիների հացի թանգութիւնը և սովը մի կողմից, իսկ վերջին տարվայ հացի չափից դուրս էժանանալը միւս կողմից՝ դրդեցին մի քանի տեղերում նորից վերադառնալու հին կարգին, այսինքն գիւղական չեմարաններ հիմնելուն և հացահատիկներ պահելուն։ Յամենայն դէպս, ժամանակաւորապէս, քանի հացը սաստիկ էժան է և ուրեմն եղած գումարներով կարելի է գնել հացի մեծ քանակութիւն, այդ փոփոխութիւնը օգտաւէտ է գիւղացիների համար։

—

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց Մանտեգացցայի «Հիւանդ սէր» վէպի հայերէն թարգմանութիւնը, որ տպագրվել է Ալէքսանդրօպոլում։ Թարգմանիչն է Ա. Գ. Դ. Ե.։ Գրքի գինն է 40 կոպէկ։

—

Թիֆլիսի նահանգապետը, ինչպէս հաղորդում է «Тиф. Листокъ» լրագիրը, կարգադրութիւն արաւ, որպէս զի տեղական վարչութեան կողմից հսկողութիւն նշանակվի բարեգործական նպատակով թատրոնական ներկայացումներ կազմողների գործունէութեան վրա, որովհետև յաճախ զանազան մարդիկ ներկայացումներ կազմելով յօգուտ դպրոցների չքաւոր աշակերտների, ներկայացումներից ստացված գումարները սեփականացնում են իրանց։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Քաղաքում լուր է պտտում, որ պ. նահանգապետը այս օրերս է ուղարկել բարձր իշխանութեանը նորընտիր քաղաքագլուխ Լեոն Տիգրանեանի հաստատութեան պաշտօնական թղթերը։ Անհամբեր սպասում ենք քաղաքագլխի հաստատութեան, որպէս զի քաղաքային գործերը կանոնաւոր ընթացք ստանան»։

—

ՌԱՇՏԻՑ մեզ գրում են յունիսի 29-ից. «Քանի օր է արդէն, որ Զէյլի Սուլթանի աչքերը բուժող յայտնի ակնաբոյժ Գալեզովսկին Սպահանից վերադառնալով, այստեղ էր գտնվում։ Բազմաթիւ հիւանդներ դիմում էին նրան, օգնութիւն գտնելու, սակայն ցաւալի է, որ շատ քչերը կարողացան օգտվել, որովհետև բժիշկը շատ կարճ ժամանակ մնաց մեզ մօտ։ Այսօր մեկնեց դէպի Պարիզ»։

—

ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐԻՑ մեզ գրում են. «Մայիս ամսվայ վերջին կիսում մեր դպրոցների հոգաբարձութիւնը պաշտօնապէս յայտնում է ուսուցիչ և ուսուցչուհի վարդանեանց ամուսիններին, որ մինչև առաջիկայ յունիս ամսի 10-ը դատարկեն դպրոցական սենեակները, որպէս զի չինութիւնը նորոգեն մինչև սեպտեմբերի 1-ը։ Բայց աւագ ուսուցիչը, առանց դրական պատասխան տալու, անտես է առնում հոգաբարձութեան այդ պահանջը. այլ և ժողովրդի մեծամասնութեան ցանկութեան հակառակ՝ հաւաքելով մի քանի ստորագրութիւններ՝ նա գնացել է Էջմիածին քահանայանալու։ Այս օրերս երկու հոգի, իմանալով թէ ինչ ճանապարհով են ձեռք բերված այդ ստորագրութիւնները, նոր խնդիրք են ուղարկել սինոդը, որով խնդրում են հերքված համարել իրանց ստորագրութիւնները։ Գուցէ շատերն են խաբված այդպէս։ Ջենք հասկանում, թէ երբ պէտք է վերջ դրվի այդ տեսակ ստորագրութիւններ հաւաքելուն և ե՞րբ պէտք է հասարակութիւնը սովորի քահանաներ ձեռնադրելու համար օրինաւոր, ուղիղ ճանապարհով համախոհականներ կազմել։ Այդ տեսակ ձեռնադրութիւնները միայն ժողովրդի մէջ տարաձայնութիւններ առաջ կը բերեն, ուրիշ ոչինչ»։

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Ով ծանօթ է տեղական կեանքին և այստեղի իգական հասարակութեան, նա անչուշտ նկատած կը լինի, թէ որչափ լոտո խաղալու կիրքը խոր արմատներ է գցել դեղեցիկ սեռի մէջ, և թէ զրպարտութիւնն ու բամբասանքը կազմում են այն գլխաւոր յատկանիշները, որոնք զանազանել են տալիս այստեղի կանանց ուրիշներից։ Մինչև այժմ սովորութիւն կար, որ կանայք յաճախ կազմում էին զանազան վէչերներ, պիկնիկներ, վիճակախաղեր, ուր և անխնայ չռայլում էին իրանց փողերը, ուր առատ թափում էին բամբասանք ու զրպարտութիւն և ուր յաճախ տեղի էին ունենում կանայի սկանդալներ... Սակայն դրանով չեն բաւականացել կանայք։ Ահա վերջերս, տեղիս հասարակական ժողովարանում, յատկապէս կանանց համար բացվել է մի բաժանմունք, որը, իր տարօրինակ նշանակութեամբ, իր վրա հասարակական ուշադրութիւն է դարձնում։ Ժողովարանի այդ կանանց բաժանմունքը, կամ, ուրիշ խօսքերով, լոտոխաղարանը, ամեն հինգշաբթի գիշերները կանոնաւոր յաճախում են կլուբի անդամների ընտանիքները և մինչև ժամը 12—1 անձնատուր են լինում լոտո խաղալուն ու բամբասանքին։ Առաջարկեցէք սղնախեցի կնոջը, որն այնքան առատաձեռն է լոտո խաղալու մէջ, աշակցել մի որ և իցէ համակրելի ձեռնարկութեան, և բացի մերժումից պախարակում էլ կը ստանաք։ Մեզ մնում է Սղնախի կանանց այդ առաջադիմական քայլը ողջունել...»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՕԼԵՐԱՆ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

—

Թիւրքիայում տարածված խոլերայի մասին Կ. Պոլսից ստացված վերջին տեղեկութիւնները հետեւեալներն են. «Յունիս 22-էն 23, Գայսէրիի ու շրջակայ այգիներուն մէջ քոլերաէ ինը դէպք և առաջուան բռնուածներէն ութ մահ։ Շրջակայ գիւղերու մէջ երեք դէպք ու երեք մահ։

«Յունիս 22-էն 23, Եօզղատի մէջ երեք դէպք ու առաջուան բռնուածներէն երկու մահ։ Գըրշէհրի մէկ գիւղին մէջ մէկ դէպք։ Եօզղատի Սօրղուն գիւղախումբին մէջ քսան օր առաջ երևան ելած քոլերան անհետացած է։

«Յունիս 23-էն 24, Եօզղատի մէջ հինգ դէպք։ Գըրշէհրի մէջ երկու դէպք և առաջուան բռնուածներէն մէկ մահ։

«Սըվազի Սուշէհրի գաւառակին Էղիտէր գիւղին մէջ յունիս 21-էն 23, տասներեք դէպք և վեց մահ։ Յունիս 22-ին Ազիզլէի մէջ մէկ դէպք։ Հաճիքէօյի մէջ երկու դէպք և Քարաքէօյի մէջ մէկ մահ։

«Սամսօնի և Իունեաի մէջ հանրային առողջութիւնը գոհացուցիչ է։

«Յունիս 22-էն 53, Գօնեաի Ագսէրայ գաւառակին մէջ վեց դէպք և հին ու նոր բռնուածներէն ութ մահ։ Իւրկիւպի մէջ երկու դէպք ու մէկ մահ։ Արապսունի մէջ մէկ մահ։ Սելէլէի մէջ մէկ դէպք ու երկու մահ։

«Յունիս 22-էն 24, Ագսէրայի մէջ տասնըչորս դէպք և հին ու նոր բռնուածներէն վեց մահ։ Սելէլէի մէջ մէկ դէպք ու մէկ մահ։ Ագշէհրի մէջ երկու դէպք։ Գօնեաէն մէկուկէս ժամ հեռուն գտնուած Ցէրէ գիւղին մէջ երեք մահ։

«Յունիս 23-էն 24 Մալաթեաի մէջ քսանը հինգ դէպք և հին ու նոր բռնուածներէն ինը մահ։ Ակնայ մէջ հանրային առողջութիւնը գոհացուցիչ է»։

ՆԱՄԱԿ ԹԻԻՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, յուլիս 2-ին

Նոր ցնցումները. երեքշաբթի կէս գիշերին մօտ, 3.40-ին, ցնցում մը պատահեցաւ, քաղաքին մէջ թեթև, բայց Կղզիներուն մէջ քիչ մը զօրաւոր։ Ուրիշ ցնցում մը՝ 5-ին, յետոյ 8.15-ին, և երէկ առաւօտ ալ ժամը 11-ին, հետզհետէ տկարանալով, անզգալի ըլլալու աստիճան։

Հեռագրական գրեթէ բոլոր հաղորդակցութիւնները դադրած են մայրաքաղաքիս և գաւառներուն միջև։

Մէկ գիծ մը միայն աղատ մնացած է՝ լուր ղրկելու և ստանալու համար։

Երկրաշարժը ընդարձակ տարածութեան վրա զգացուած է մինչև Փոքր-Ասիոյ ներսերը։ Հեռագրական թելերուն կրած վնասներուն պատճառաւ, ստոյգ տեղեկութիւններ չի կան դեռ երկրաշարժին յառաջ բերած աւերումներուն վրա։

Սակայն, ճամբորդներու բերնէ առնուած տեղեկութեանց նայելով, Ատա-Բազարի մէջ բոլոր քարուկիր տունները փլեր են։ Իզմիտ ալ մեծապէս վնասուեր է։ Ցարբճայի մէջ ալ վնաս կայ, բայց ոչ այնչափ շատ. Ատա-Բազար կըսուի թէ զոհերուն թիւը շատ մեծ է։

Կղզիները. Երկրաշարժը շատ սոսկալի եղած է Կղզիներու մէջ, այնքան զուցէ, որքան Ստամպոլի մէջ։ Բայց չորս կղզիներէն ամենէն աւելի վնասված է Հալքի և յետոյ Անթիկոնի։

Բրինքիբոյի մէջ չի կայ տուն՝ որուն ծեփերը թափած չըլլան, փայտէ տներն էն քիչ վնասուածներն են։

Հալքի. Մեծ ցնցումը հոս ալ յառաջ բերած է սարսափելի վայնասուն մը։ Ցոյներուն Ասուածածանութեան դպրոցը որ կը բարձրանար բլուրին գագաթն՝ իր նորաշէն հատ որմերով, կիսով չափ կը կործանի, բարեբաղդաբար այն բոպէին, ուր բոլոր վանականներն արդէն խուցերէն ելած հաւաքուած էին մեծ չէնքին շրջաբակէն դուրս ճաշարանի մը մէջ որ չը վնասուեցաւ։ Այս բարեպատեհ հանդիպումին կը պարտին իրենց կեանքը դպրոցին բոլոր վանականները որք 30-էն աւելի են։

Գետնաշարժէն անմիջապէս յետոյ կղզիները լեցուեցան ահագին բազմութեամբ մը, որուն հարկաւոր էր թէ պառկելիք տեղ գտնել և թէ ուտելիք։ Ամեն ոք փառց մը կամ անկողին մը առած գնաց ընկղմանեցաւ բացօթեայ տեղ մը։ Եղան ալ որ վրաններ կազմեցին անկողնի սաւաններով և կամ որ և իցէ կապերտներով։ Պանդոկներն, որք գրեթէ առանց հիւրի էին մինչև այսօր, սկսան քիչ մը գործ ընել ուտելիք և պառկելիք հայթայթելով։

Շուկային զանները գոց են, բայց պէտք է գրած խուզարկութիւնները կը կատարուին՝ փլատակներուն տակէն դիակները հանելու համար։ Երեքշաբթի մինչև իրիկուն հանուած էր 10 դիակ։ Երէկ, մինչև իրիկուն, կը հաշուուէր թէ Շուկայէն հանուած դիակներուն թիւը կը հասնի 65-ի։ Մեծ մասը Գում-Գարու Մայր-Եկեղեցին կը փոխադրուին, ուր տիրող տեսարանը սրտաճմլիկ է։ Զոհերուն ազգականները, կիները և տղաքները, հոն խռնուած, աղիողորմ աղաղակներով եկեղեցին կամարը կը թնդացնեն։ Հայ քահանաներուն մեծ մասը, որոնք գիւղերը փոխադրված էին, փութով վար իջած են։

Սպարապետութեան պաշտօնատունը փլաւ իր մեծ դրան կողմէն և ամեն կողմերէն վնասված է։ Երէկ 800 պաշտօնեաները բացօթեայ ծառերուն տակ հաւաքուած էին։ Կրթական նախարարութեան պաշտօնատունը անբնակելի է։

Հեռագրատուն. Հեռագրական տեսչութեան յատուկ շէնքին մէջ մէկ քանի սենեակներն անբնակելի եղած են. այս պատճառաւ մեքենաներն և գործիքները պարտէզը փոխադրուած են։

Ս. Փրկչի հիւանդանոցին նոր շէնքերը քիչ մը վնասուած են։ Ցիմարները և որբերը պարտէզը փոխադրուելով և կիներն ալ բակը, հոն գիշերեցին։ Ցունաց հիւանդանոցն ալ մեծապէս վնասուեր է։ Ամբողջ օրը երկու հիւանդանոցները փոխադրուեցան վիրաւորներ, որոնք պարտէզներուն մէջ կը դարմանուէին։

Մաքրիգիւղ, շատ տուներ վնասուած։ Երեք հոգի մեռած, և երկու վիրաւորված։ Տ. Խորէն Աշըքեան արքեպիսկոպոսի տանը ծխնելոյզը փըլեր է։ Հայոց եկեղեցին ճաթռատած և մեծ ջանը ցրեխ ցրեխ եղած է։ Հայոց դպրոցը վնասուած է քիչ։

Ցունաց եկեղեցին ու վարժարանն ալ վտանգված։ Հայոց Ներշապուհեան վարժարանը փլած։

Երկրաշարժին ատեն ծովը զարհուրելի տեսարան մը կը ներկայացնէր։ Ջուրը սև մելանի գոյն առած, հարիւր մեղր հեռաւորութեամբ եղերքէն քաշուելէ յետոյ, թաթառի ձեւով նորէն ցամաքին վրա լնկած է՝ նաւակները փչրելով, քարափին քարերը փլցնելով, ամեն բան աւելլով սրբելով։

Երկաթուղիին գծին վրա բոլոր կայարանները մինչև Զաթալճա վնասուած են։

Ստացուած նոր հեռագիրներէ կը տեսնուի, թէ Գոնիայի մէջ ցնցումը զօրաւոր եղած է, բայց շատ քիչ վնաս պատճառած է։

Էնկիւրիի մէջ վնասը շատ մեծ է, կըսէ հեռագիրը։

Ցունաստանի մէջ քանի կողմն ալ զգացուեր է երկրաշարժը, բայց թեթև կերպով։

Նոր ցնցում։ Սարսափը նորէն տիրեց քաղաքին մէջ երէկ իրիկուան դէմ։

Ժամը ճիշդ 8.33-ին, երկրաշարժի զօրաւոր ցնցում մը, գրեթէ այնչափ սաստիկ, որչափ երեքշաբթի օրուան ցնցումը, եկաւ վերջ տալ այն անդորրութեան և վստահութեան, որ առժամանակ տիրել էր։

Բարեբաղդաբար այս նոր ցնցումը հազիւ երկու երեք բոպէ տեւեց, այնպէս որ չի կարծուիր, թէ վնաս մը յառաջ բերած ըլլայ։

Վայրկեան մը չանցած, ամեն մարդ քաղաքին մէջ չէնքերէն դուրս փախած էր, դիմելով հրապարակները, ամեն բան երեսի վրա ձգած։

Կամուրջը ի քթթել ական լեցուեցաւ այնպիսի բազմութեամբ մը, որ իրաւունք ասեղ ձգելու տեղ չի կար։ Կամուրջին տախտակները կը հեծէին իրենց վրա ծանրացող ահագին բազմութենէն։

Շատեր ապաստանեցան անմիջապէս քարափներու վրա, ուրիշներ նաւակներու մէջ նետուեցան։ Շողենաւերը լեցուող բազմութիւնը անհամար էր։

Կէս ժամ չանցած, պաշտօնատուն, դրամատուն, ամեն բան դոցուած էր, և փոխադրները ու հրապարակները իրենց առջի օրուան մեռելական ամայութիւնը կը դտնէին նորէն։

Ընդհակառակը, հանրային պարտէզները և հրապարակները, որոնք սկսած էին պարպուիլ, նորէն լեցուեցան յուզումնալից բազմութեամբ մը։

Մայրաքաղաքիս ժողովուրդը, որուն մեծ մասը կը պատրաստուէր հինգշաբթի գիշերը անցնելու իրենց լքաց տուներուն մէջ, նորէն դուրսը անցուց գիշերը։

Իրիկուան ժամը 11-ին զօրաւոր ցնցում մը զգացուեցաւ դարձեալ, մէկ բոպէ տեւելով։

Իրիկունը, քաղաքին տեսարանը տարօրինակ կերպով տխուր ու սրտի դպչող է։ Ընտանիքներու խումբեր, ծարներով ու կապոցներով, կը դիմեն քաղաքին մէջ բոլոր այն կողմերը ուր չէնք չի կայ։ Երրորդ գիշերն է որ մայրաքաղաքը վաչկատունի կեանք մը կանցընէ։

Նոր ցնցումին հետևանքները։ Այ-Սթեֆանոյի կաթոլիկ եկեղեցին, որ արդէն խարխլած էր երեքշաբթի օրուան երկրաշարժէն, բոլորովին փլաւ հինգշաբթի օր։

Ստամպոլի կողմը նոյնպէս շատ պատեր, որոնք փլչելու վտանգ կը սպառնային, փլան նոր ցնցումներէն։

Շուկային մէջ մանաւանդ իր հետևանքներն ունեցաւ 8.33-ին պատահած ցնցումը։ Ոսկերիչներու, ֆէսճիներու և եաղլըքճիներու թաղեր փլան։ Այդ միջոցին պահապան մը փլատակներուն տակ մնալով մեռաւ։ Գաղաղներու փողոցը նմանապէս բոլորովին փլաւ։

Հինգշաբթի օր շուկային մէջ կըսուի թէ փլատակներուն մէջէն երեք հոգի գտեր են ողջ։

Փողոցներուն մէջ նոյն ամայութիւնը, և գործունէութեան կեդրոններու մէջ նոյն անշարժութիւնը։ Պորսան դարձեալ գոց. գոց նաև վաճառատունները և խանութները։ Պոլսոյ կողմը, ստիպողական գործեր ունեցող վաճառականները հաւաքուած էին Սիրքէճիի գարեջրատունը և հոն, մարմարէ սեղաններու վրա, կը գրէին իրենց նամակները և կուտային հրահանգները իրենց պաշտօնեաներուն։ Գալաթիա և Բերա բոլոր խանութները գոց։

Ներքին գործոց նախարարութեան հասած պաշտօնական հեռագիրներից կերևի թէ երկրաշարժներ եղել են Պրուսա, Այտըն, Էնկիւրի, Զաթալճա, Ռօթսթա։ Վնասը մեծ է։

***

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Պարիզից հեռագրում են լրագիրներին, որ Պարիզի տասն և հինգ ընտրողական շրջանները վճռեցին հրաւիրել ընտրողներին՝ բողոքել անարխիստներին վերաբերեալ օրէնքի դէմ։

—Ունգարիայից աքսորվում են օտարահպատակ անարխիստները։

—«Daily News» լրագրին Պարիզից գրում են, որ օգոստոսի 6-ին քրէական դատարանում կը սկսվի պարիզցի 30 անարխիստների գործի քննութիւնը։

—Լոնդոնում ապրող անարխիստները, անգլիական լրագիրների խօսքերով, վճռել են փոխել իրանց գործունէութեան եղանակը և այլ ևս չըրջաբերականներ չը հրատարակել, որպէս զի չը զրկվեն ապաստանի իրաւունքից Անգլիայում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լրագիրներին Վիէննայից հեռագրում են անատոմիայի հռչակաւոր պրոֆէսօր Յոսէֆ Հիրտլի մահվան մասին։ Հիրտլ ծնվել է 1811 թիւ դեկտեմբերի 7-ին Էյզէնշտատում, Ունգարիայում, ուսում է առել Վիէննայում, 1833 թիւին պրոզէկտոր դարձաւ Վիէննայի համալսարանում։ Այդ համալսարանին կից նա հիմնեց անատոմիական թանգարան։ 1837 թիւն նա անատոմիայի պրոֆէսօր հրաւիրվեց Պրագա, բայց 1845 թիւին Վիէննա վերադարձաւ, ուր և դասախօսում էր մինչև 1874 թիւը համեմատական անատոմիա։ 1874 թիւն նա աւարտեց իր պրոֆէսօրական գործունէութիւնը և ապրում էր Պէրխտոլդսդորֆում, Վիէննայի մօտ։

Հիրտլ գերմանական հռչակաւոր անատոմ է։ Նրա գրուածքները ոչ միայն գիտնական մեծ նշանակութիւն ունեն, այլ և աչքի են ընկնում իրանց լեզուի և ոճի գեղեցկութեամբ։ Նա բազմաթիւ առաջնակարգ գրուածքներ ունի, որոնց մէջ ամենանշանաւորն է «Մարդու անատոմիայի ձեռնարկ» գիրքը, որ գրել է 1847 թիւն և մինչև 1885 թիւը արդէն լոյս տեսաւ 18 հրատարակութեամբ։ Այդ դասագիրքը թարգմանված է շատ լեզուներով։

*
* *

Մի երիտասարդ ալբանացի, Պետերբուրգի համալսարանի ուսանող, «Свѣтъ» լրագրում տպել է մի նկատողութիւն, որով հասարակութեան ուշադրութիւնն է դարձնում իր հայրենիքի տխուր դրութեան վրա։

«Ալբանական ժողովուրդը, ասում է նա, խարխափում է տգիտութեան մէջ, որովհետև այդ երկրի վրա իշխող թիւրքերը և յոյները ալբանացիների մէջ լուսաւորութիւն տարածելու կատաղի հակառակորդներ են։ Ալբանական ժողովուրդը զուրկ է իր հոգևոր պահանջներին բաւարարութիւն տալու հնարաւորութիւնից այնպէս, որպէս ինքն կը ցանկանար, որովհետև հոգևորականութիւնը բաղկացած է յոյներից, և ժամասացութիւնը կատարվում է յունարէն լեզուով, որ քիչ հասկանալի է ալբանացիներին։ Ի՞նչու ալբանացիներին հնարաւորութիւն չը տալ իրանց քահանաներն ունենալ և ժամասացութիւնը լսել մայրենի լեզուով։ Ալբանացիները անդադար թիւրքերի բռնութեան և կամայականութեան են ենթարկվում չնորհիւ այն բանի, որ Ալբանիայում չը կան եւրոպական քաղաքակրթված պետութիւնների ներկայացուցիչները և ալբանացիները չը գիտեն, թէ ում դիմեն պաշտպանութիւն խնդրելու։ Թիւրքերը ճնշում են ալբանացիներին, և իրանք պարքերով ծանրաբեռնված լինելով, հարկադրում են մեզ վճարել անասելի հարկեր և սպառում են մեր երկիրը։ Մենք, ալբանացիներս, աշխատանքից չենք փախչում, մեր երկիրը շատ դանձեր է պարունակում իր մէջ, որոնք անյայտ են եւրոպացիներին, և մենք պատրաստ կը լինէինք թիւրքերին կըրկնակի վճարել այն դումարից, որ նրանք մեզ-

նից այժմ ստանում են, միայն թէ նրանք մեզ հանգիստ թողնէին։»

* * *

Սովորութեան համաձայն, Ֆրանսիայում ընտրում են մի նշանաւոր քանդակագործի և յանձնում են նրան պատրաստել նոր նախագահի կիսարձանը։ Յետոյ այդ կիսարձանը պահվում է որ և է թանգարանում։ Օրինակ, Թիէրի կիսարձանը պահվում է Մարսելի թանգարանում, իսկ Կարնօի կիսարձանը—Լուվրում։ Նոր նախագահ Կազիմիր Պէրիէի կիսարձանը յանձնված է պատրաստել քանդակագործ Բուշէին։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 11 յուլիսի։ Կօրէյան պատրաստականութիւն է յայտնում ըէֆորմներ մտցնել, եթէ եապօնական զօրքերը յետ կը կանչվեն. ենթադրում են, որ այդ յայտարարութիւնը արված է Չինաստանի դրդմամբ։ Չինաստանը առաջարկեց Եապօնիային դիմել Անգլիայի միջնորդութեանը։ Անգլիան խորհուրդ էր տալիս Եապօնիային հաշտութիւն կայացնել, բայց Եապօնիան մերժեց Չինաստանի առաջարկութիւնը. այն ժամանակ Չինաստանը յայտնեց, որ եթէ եապօնական զօրքերը յետ չեն կանչվի, բանակցութիւնները կընդհատվեն։ Չինաստանի և Եապօնիայի այստեղի դեսպանները ոչինչ յայտնի չէ պատերազմ յայտնելու մասին։ Յուլիսի 20-ին Տօկուից Կօրէյա է ուղարկված 12000 մարդուց բաղկացած չինական մի զօրաբաժին և 8 զինուորական նաւեր, որոնց հրամայված է հրացանաձգութիւն սկսել, եթէ եապօնական զօրքերը դիմադրութիւն կը ցոյց տան ափ իջնելուն։ Ֆուչէուից նոյնպէս զօրքեր են ուղարկվում Լէօչու կղզիները։ Պատերազմի դէպքում, Նանկինի և Կանտոնի չինական զինուորական նաւերը կը պաշարեն եապօնական ծովափերը։ Իւրաքանչիւր չինական նահանգ պարտաւոր է 20.000 հոգուց բաղկացած զօրք տալ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 յուլիսի։ Նոցա Կայսերական Մեծութիւնները իրանց Օգոստափառ Երեխաներով վերադարձան երէկ Ֆինլանդիայից Պետերհօֆ։ Պօստային մարկաներ ձեռք բերելու և պօստային թղթակցութիւն ստանալու և ուղարկելու համար մեծ յարմարութիւններ տալու նպատակով, կայսրութեան այն տեղերի բնակիչներին, որոնք կամ բոլորովին զրկված են պօստային հաղորդակցութիւնից, կամ պօստ-հեռագրային և պօստային հիմարկութիւններից հեռու են դտնվում, թոյլ է տրվում պօստային մարկաներ ծախել, նոյնպէս և ընդունել և ուղարկել մանաւորնամակներ (նամակներ և բանդէրոլով ուղարկվող թղթեր) վոլոստների վարչութիւններին, դրա մասին կայացնելով վոլոստների համախօսականներ։ Հրամայված է թոյլ տալ կայսերութեան ներսը ապօրինի կերպով ապրող բոլոր հրէաներին, առևտրի և արդիւնաբերութեան դործունէութեան տեսակի և չափի համեմատ, ընտրել առևտրական դոկումէնտներ, իրանց այժմեան բնակութեան տեղի համեմատ, մինչև որ նրանք կը բնակեցնվին իրանց մշտական բնակութեան տեղերը, Բարձրագոյն հրամանով որոշված ժամանակամիջոցներում։

ՇԱՆԹԱՑ, 13 յուլիսի։ Կօրէական զօրքերը, դրդված չինական բէզիդէնտից, յարձակվեցին եապօնական բերդապահ զօրքի վրա Սէուլում, բայց յետ մղվեցին. երկրորդ հեռագիրը տեղեկացնում է, որ եապօնական դրահակիր նաւը ծովը ընկղմեց չինական տրանսպորտը։

ԼՕՆԴՕՆ, 13 յուլիսի։ Թագաժառանգ Ցէսարեվիչը հրաժեշտի ողջոյնն առաւ թագուհուց երեկոյեան 11 ժամին և անցաւ «Полярная Звѣзда» նաւը, որը ճանապարհ ընկաւ առաւօտեան 3 ժամին։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յուլիսի 12-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ . .	93	ր.	05 կ.
Բերլին վրա 100 մարկ — . .	45	ր.	60 »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	36	»	90 »
Ոսկի — — արժէ . .	7	»	44 »
Մաքսային կուպօններ — . .	149	»	— »
Արծաթ — — — . .	—	»	— »
Բօրսային դիսկօնտ — . .	5	»	7 »
Պետ. բանկի 5% տոմս 1 չրջանի .	—	»	— »
— — — — 2-րդ .	—	»	— »
— — — — 3-րդ . .	—	»	— »
5% ոսկեայ բէնտա 1884 թ. . . .	159	»	— »
4½ ոսկեայ փոխառութիւն. . . .	—	»	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին չրջ.	240	»	75 »
— — — 2-րդ —	225	»	— »
— — — 3-րդ —	—	»	— »
— — — 4-րդ —	—	»	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	—	»	— »
— — երկրորդ —	—	»	— »
Պետական երկաթուղային բէնտա.	102	»	— »
4½ բէնտա	—	»	— »
4% ներքին փոխառութեան . . .	95⅝	»	75 »
5% դրաւ. թղթ. աղն. կալ. բանկի	—	»	— »
Աղն. կալ. Պետ. բանկի խաղարկութ. դրաւ. թղթ. — — .	—	»	— »
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	93	»	50 »
4½% դրաւական թղթեր կալուած. Պետերբ. կրեդիտ. ընկեր. մետալ. .	152	»	— »
— — — թղթադ. .	—	»	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.	101	»	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101	»	— »
Օդէսայի — —	101	»	50 »
Թիֆլիսի — —	99⅛	»	— »
Դրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	101	»	— »
— — Ռոստովի — .	101	»	— »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւնների։

Կ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային հ.

Դ. Դ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխաների և կանանց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԳՕ—1—1½ ժ. ականջի, կոկորդի, և քթի.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—12½—1 ժ. կանանց ց.

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի և մէզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) դ օպերացիայի համար առանձին։ Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝ բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ։ (№ 72)

Գ. կարգի, ցէնզաւոր, **ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ**, որը եղել է ուսուցչական ասպարիզում 5 տարի, ցանկանում է պաշտօն ունենալ Հայոց դպրոցներից մէկում։

Դիմել պայմաններով՝ Эривань. Священнику Вачеянцу. (№ 80) 1—2

ԱԲԻՍ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

ՌՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆ

Ա. հատորի գինն է . . . . . 3 ր.

Բ. հատորինը „ . . . . . 4 ր.

Վաճառվում է Խիդդեկէլի գրավաճառանոցում, Գոլովինսկի պրոսպեկտ։

Գրավաճառներին 10% զիջումն։

(№ 58) 10—10

Խնդրվում է հայ հեղինակներին, թարգմանիչներին և առհասարակ ցանկացողներին, որ բարեհաճեն իրանց հեղինակութիւններից, թարգմանութիւններից և ունեցած գրքերից մի-մի կամ մի քանի օրինակ նուիրել ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՊԱՆԴՈՒԽՏՆԵՐԻ

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻՆ

Ցանկացողները պէտք է ուղարկեն այս հասցէով. M-r N. Karapetian, 439, P. O. Rox. WORCESTER, MASS, E. U. d'AMERIQUE. 7—10

Նիկողայոս Տէր-Ղևոնդեանցի հրատարակութիւնների պահեստը յունիսի 10-ից մինչև առաջիկայ սեպտեմբերի 1-ը յանձնված է կենդրոնական գրավաճառանոցին, ուր պէտք է դիմեն այդ գրքերի պէտք ունեցողները։ (№ 73) 6—10

Թաւրիզի "ԱՐԱՄԵԱՆ„ ԵՒ „Ս. ԱՆՆԱՑԻ„ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ համար հարկաւոր է մի հմուտ հայ ուսուցիչ, որը պիտի վարէ նոյն դպրոցների տեսչական պաշտօնը, այլ և շաբաթական 16 դաս. զաղղիական լեզուն պիտի աւանդէ միայն Արամեան դպրոցում։ Պայմանների համար խնդրվում է դիմել Թիֆլիսում պ. Ա. Մելիք-Ազարեանցին և պ. Խոսրով Արզումանեանցին։ (№ 79) 2—8

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ համար հարկաւոր են ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ, ՎԱՐԺՈՒՀԻ և ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ։ Ցանկացողները կարող են դիմել ինձ՝ "Ֆրանսիա„ հիւրանոցը № 26 պայմանների համար խօսելու։ Թ. Փանեանց (№ 79) 2—3

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մ. ԴԷ-ԼԱ-ՖԱՐ ԵՒ ԸՆԿ.

կատարում է հետևեալ օպերացիաները.

1) Տոկոսաբեր թղթերի ապահովութեամբ՝ փոխառութիւն.

2) I, II, III խաղարկութեան տոմսակների վաճառումը, ԱՄՍԱԿԱՆ 5 ՐՈՒԲԼԻ ՎՃԱՐՈՒՄՈՎ.

3) Փոխանակագրեր է տալիս Ռուսաստանի զանազան քաղաքների վրա.

4) Ընդունում է ժամանակաւոր և մշտական աւանդներ.

5) Բաց է անում ընթացիկ հաշիւներ՝ չէկերով.

6) Ընդունում է in casso վէկսելներ և ուրիշ դոկումէնտներ։

Լիազօր՝ Ս. Գ. ՊԱՎԼՈՎ ԹԻՖԼԻՍ, Սէրգիևսկայա փողոց, № 1.

Գանձակում գործակալն է՝ Նիկոլայ Կարամանովիչ Օհանէսով։

(№ 15) (Հ.) 23—50



ԿԱԿԱՕ

Թաղը նստում է միայն 4 կոպեկ։

Լուսանկարներ

ՄԱՔՈՒՐԴԻ ՄՆՆԴՈՒԱՐԸ ՓՈՇԻ։

Առաջարկվում է առողջարար

և երեխաների համար։

Միայն առհասարակ հաստատված

Բարձրագոյն հրամանով

№ 120. 90 թ.

(գ) 18—30

ԼՈՑՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Ժողովրդական ընթերցանութեան համար խմբագրված հետևեալ գրքերը

Վ ի պ ա գ ր ա կ ա ն

ԼԱԼՕ, Թիւրքահայերի կեանքից. Վ. Փ. .	5 կ.
ԱՑՍՏԵՂ, ԵՒ ԱՑՆՏԵՂ, Գ. Արծրունու . .	10 »
ԱՐՆԱԳԻՆ, Լէօֆ.	7 »
ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՏԻԿԻՆ.	5 »
ԼԻՐ ԹԱԳԱՒՈՐ, ըստ Շէքսպիրի. . . .	5 »
ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒՀԻ, Թարգ. Խ. Մ. .	5 »
ԳԻՒՂԱԿԱՆ ԱՂՔԱՏ } ԳԻՒՂԱԿԱՆ ՋՈՒԹԱԿԱՀԱՐ }	5 »
ԵՂԲԱՑԻՐԸ ԵՂԲՕՐ ԴԷՄ, Թարգ. Ց. Օ. . .	7 »
ԱՐՋԵՐԸ, Գարշինից, Թարգ. Խ. Մ. . .	5 »

Ռ ո մ ա ն ա կ ա ն

ՊՍՏԻԿ Է, ԲԱՑՑ ՁՍՏԻԿ Է, Լոնկֆելլիչի. . .	5 »
Ի՞ՆՉ Է ԿԱՑԾԱԿԸ	5 »
ԵՐԿՐԱՇԱՐԺ ԵՒ ՀՐԱԲՈՒԼԽ	6 »
ԱՐԵԳԱԿԻ ԵՒ ԼՈՒՍԻՆ ԽԱՒԱՐՈՒՄԸ. . .	5 »

Կ ե ն ս ա գ ր ա կ ա ն

ՄՏՑԻ ՄՇԱԿԸ, Խ. Մալումեանի.	50 »
ԽՐԻՄԵԱՆ, » » »	40 »

Ա ռ ո ղ ջ ա պ ա հ ա կ ա ն

ԽՕԼԷՐԱ ԵՒ ՄԻԶՈՑՆԵՐ բժ. Գ. Տ. Գ. . .	5 »

Օ ր է ն ս գ ր ա կ ա ն

ԶԻՆՈՒՈՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ Կովկասի համար կազմեց Խ. Մ. . . .	30 »

Թիֆլիս։ Խ. Մալումեան

ՄԻ ՓՈՐՁՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉ

պատրաստում է աշակերտներ մասնչելի պայմաններով։ Сололаки, Орловская улица № 28 (№ 78) 3—3

НѢМЕЦКАЯ ГОСТИННИЦА

HOTEL NIEMIECKI, „ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ" դտնվում է **ՎԱՐՇԱՎԱ-ՅՈՒՄ**, քաղաքի կենտրօնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նօմէրներ որոնց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման։ Նօմէրների գինը 50 կոպէկից մինչև 3 բուբլի օրական, անկողնով և ծառայով։ Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, որտեղ ստացվում են հայերէն „Մշակ" և „Նոր-Դար" լրագիրները, հիւրերի համար անվարձ։ Կայ ըէստօրան, տելեֆոն, քաղցրեղէնների խանութ, բաղնիսներ։

Հիւրանոցի կառքերը դտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում։

(№ 21) 93—130 (2.)

ԴԵՂ ԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

դեղերի, մրթին դեղեցկացնող և հոտաւէտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և տնտեսական գործիքների, բացված է Կուկիայում, Վօրոնցովի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ։

(№ 67) 87—100 (Լ. 2.)

Дозволено цензурою, Тифлисъ, 13 Іюля 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. кав.